ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2025թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքում 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը) և իրավաբանական անձանց, հիմնարկներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ազատել 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը Օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

«__»_____ 2025թ.

ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի 265-Ն որոշմամբ սահմանված բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարի դրույքաչափի հաշվարկման մեթոդի կիրառման, ինչպես նաև հաստատուն ելակետային տվյալների հիման վրա աղբահանության վճար վճարողների հաշվառման էլեկտրոնային նոր համակարգի ներդրման արդյունքում հաշվարկված աղբահանության վճարի չափը առցանց հարթակում դիտելու, և վճարումների ընդունման առցանց համակարգի միջոցով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում վճարումներ կատարելու ոչ լիարժեք հնարավորության հետևանքով՝ առաջարկվում է 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը սահմանված ժամկետներում չվճարած ֆիզիկական (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը) և իրավաբանական անձանց, հիմնարկներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ազատել 2025 թվականի հունվար և փետրվար ամիսների համար հաշվարկված աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ հաշվարկված տույժերի վճարման պարտականությունից:

Հիմք ընդունելով վերոգրյալը Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում աղբահանության վճարի արտոնություն սահմանելու մասին որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ